

# NFC

## Կանխիտկացում Ուղեցույց



## NFC կանխիկացումներ

Չավելվածի Android օգտատերերի համար կգործի NFC կանխիկացումների հնարավորություն:

NFC կանխիկացումներն իրենցից ներկայացնում են սմարթֆոնով բանկոմատից կանխիկացումներ: Ընդամենն անհրաժեշտ է contactless քարտեր սպասարկող բանկոմատին մոտեցնել հեռախոսը և կատարել կանխիկացում:

Ծառայությունն աշխատում է նույն տրամաբանությամբ, ինչ NFC վճարումները: Անհրաժեշտ է հավելվածից թվայնացնել Visa տեսակի քարտը և սմարթֆոնը մոտեցնելով contactless քարտեր սպասարկող ցանկացած բանկոմատի կատարել հաջորդական քայլերը:

!!!

Կանխիկացում կատարելու համար ACBA Digital բջջային հավելվածը բացելու անհրաժեշտություն չկա: Անհրաժեշտ է պարզապես ապաբլոկավորել սմարթֆոնը:

!!!

!!!

Ծառայությունը հասանելի է աշխարհի բոլոր contactless քարտեր սպասարկող բանկոմատներով:

!!!





1

NFC կանխիկացում կատարելու համար անհրաժեշտ է ապաբլոկավորել սմարթֆոնը և այն մոտեցնել contactless քարտեր սպասարկող բանկոմատի NFC ընթացքման հատվածին:

2

Եթե ապաբլոկավորումից հետո անցնել է 30 և ավելի վայրկյան, ապա բանկոմատի Էկրանին կհայտնվի հետևյալ հաղորդագրությունը, որը հուշում է դիտել հեռախոսի նկարագրությանը: Եթե ապաբլոկավորումից չի անցել 30 վայրկյան, ապա բանկոմատի Էկրանին կհայտնվի 3-րդ նկարը:



Չուզահեռաբար սմարթֆոնի Էկրանին կհայտնվի ապաբլոկավորման առաջարկ (finger, FaceID, PIN, Pattern) կամ դրամապանակի կողի մուտքագրման դաշտ (այն կողմ է, որը օգտատերն ինքն է սահմանում քարտը թվայնացնելուց, եթե սմարթֆոնի վրա առկա չէ ապաբլոկավորման որևէ մեթոդ): Սմարթֆոնի հրահանգները կատարելուց հետո անհրաժեշտ է այն ևս մեկ անգամ մոտեցնել բանկոմատի NFC ընթացքման հատվածին:

3

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բանկոմատ մուտքագրել այն քարտի PIN կոդը, որը Acba digital հավելվածում թվայնացվել է:

